ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵԳԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԳԱԳԻԿԻ

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Հովհաննիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մ.Մ.Մանուկյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու **Ս.Մ.Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. հունիսի 18-ին ժամը 12^{00}-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ.Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հասարակական կյանքի զարգացումներն արդի ժամանակաշրջանում մեծապես կախված են համաշխարհայնացման, մարդկային գործունեության տարբեր ոլորտներում միջազգային պահանջների, չափանիշների մշակման ու ներդրման գործընթացների զարգացումներից: Բացառություն չէ նաև կրթության ոլորտը: Ժամանակակից պայմաններում համաշխարհային կրթական միասնական դաշտի կայացումը պայմանավորված է նաև կրթության համակարգի կատարելագործումով, մանկավարժական գիտությունների զարգացման միտումներով: Ժամանակակից կրթության հիմնական ուղղվածությունը մի կողմից պայմանավորված է կրթության որակի նկատմամբ հոգատարությամբ, մյուս կողմից մանկավարժի, ուսուցչի ինքնակայացմանը, անձնային ներուժի բացահայտմանը և զարգացմանը միտված մասնագիտական աջակցությամբ: Հիմնախնդիրն այսօր, առավել քան երբևէ, կարևոր է դարձել: Կրթության գործընթացի որակի կառավարումը, սովորողի մասնագիտական ծրագրով առաջխաղացման գործում աջակցության ապահովումը հնարավոր է հետադարձ օբյեկտիվ կապի առկայության պարագայում: Մանկավարժական գործընթացում այդպիսի կապ ապահովում է մանկավարժական դիագնոստիկան: Այն կանխատեսելի և չափելի է դարձնում մանկավարժական գործընթացը, նրա արդյունքները:

Կրթության որակի ցուցանիշներից մեկը ժամանակակից աշխատաշուկայում մրցունակ մանկավարժ-մասնագետի պատրաստումն է, որի կարևոր նախապայմաններից է նրա մասնագիտական, անձնային որակների մասին օբյեկտիվ տվյալների ձեռքբերման ապահովումը:

Կրթության ժամանակակից համակարգի վերլուծությունից եզրակացնում ենք, որ մեզանում դեռևս անտեսվում է մանկավարժական դիագնոստիկան, դրա մասին գիտելիքների բացակայությունը կամ անբավարարությունը, դիագնոստիկական գաղափարները գործնականում կիրառելու համար համապատասխան կոմպետենտությունների անբավարարությունը լուրջ բացթողում է: Նշված բացերի լրացումը հնարավորություն կտա վերահսկել ապագա մանկավարժի կայացման ընթացքն ու զարգացումը: Այն ենթադրում է նաև մանկավարժական դիագնոստիկայի համալիր, բազմակողմանի ուսումնասիրություն, «Մանկավարժական դիագնոստիկայի»՝ որպես ինքնուրույն դասընթացի ներառում մանկավարժական մասնագիտությունների կրթական ծրագրերում, համապատասխան ուսումնական ծրագրի մշակում, դրա արդյունավետության փորձարկում: Դա կնպաստի կրթության որակի բարձրացմանը, ապագա քայլերը ճիշտ պլանավորելուն ու հետադարձ կապ ապահովելուն:

Մանկավարժական դիագնոստիկայի հիմնախնդիրը դիտարկվել է տարբեր տեսանկյուններից. նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի /Տ.Վ.Արտյոմնա, Ա.Մ.Շետինինա/, դպրոցականների դաստիարակության /Պ.Վ. Ստեպանով, Դ.Վ. Գրիգորև, Ս.Կ.Օվսյանիկովա/, ուսման նկատամամբ մոտիվացիայի ձևավորման /Ն.Ա.Ռոմուսիկ, Լ.Վ.Միշչենկո/, ռազմական բուհերում սպաների պատրաստման և պայմանագրային զինծառայողների միջանձնային հարաբերությունների բացահայտման /Օ.Յու.Եֆրեմով, Ա.Ա.Տեպլովա/, կրթության որակի բարձրացման /Ս.Մ.Զախարովա, Ի.Ա.Ֆեդյակովա/, մանկավարժների պատրաստման /Դ.Ա.Լուկաշենկո/, լրացուցիչ կրթության ոլորտում սովորողների հետազոտական կարողությունների ձևավորման /Տ.Ի.Շեստերնովա/, հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդիկաների ստեղծման /Ա.Լ.Վենգեր/ գործընթացներում:

Վերոհիշյալ մասնագետներն ուսումնասիրել են մանկավարժական դիագնոստիկայի առանձին կողմեր, մշակել մեթոդիկաներ, սակայն հայ իրականության մեջ մինչ օրս տեսական և գործնական հետազոտություններում մանկավարժական դիագնոստիկային վերաբերող համակարգված աշխատանքներ իրականացված չեն, մշակված չեն համապատասխան բուհական դասընթացների համար նախատեսված ծրագրեր: Տարբեր մասնագետներ դիագնոստիկայի տարբեր ասպեկտներ են լուսաբանել, սակայն մանկավարժական մասնագիտական կրթության ոլորտում դիագնոստիկ կոմպետենտության ձևավորման դիդակտիկական համակարգ դեռևս մշակված չէ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ մանկավարժական դիագնոստիկայի տեսական և մեթոդաբանական հիմքերի վերլուծությունն ու մանկավարժական գործընթացում դրա կիրառման արդյունավետության բարձրացման ուղիների մշակումն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ մանկավարժական մասնագիտական կրթության ոլորտն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ մանկավարժական դիագնոստիկայի տեսությունն է, մեթոդաբանությունը և կիրառման ուղիները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ ենթադրվում է, որ մանկավարժական գործունեությունը, մանկավարժների պատրաստման գործընթացը կլինեն ավելի արդյունավետ, եթե.

1. որոշվեն սովորողների ուսուցման և դաստիարակության ընթացիկ և հեռահար նպատակները, հաշվի առնելով մանկավարժական դիագնոստիկայի արդյունքները,
2. վերլուծվեն մանկավարժական դիագնոստիկայի տեսական և մեթոդաբանական հիմքերը, մշակվեն ու առաջադրվեն արդի մանկավարժական գործընթացներում դիագնոստիկայի արդյունավետ կիրառման ուղիներ,

3. բացահայտվեն մանկավարժական դիագնոստիկայի բովանդակային և գործառական բնութագրերը, կիրառման հիմնական ուղղությունները և մշակվի «Մանկավարժական դիագնոստիկա» գիտատեսական դասընթացի ծրագիր:

4. ապագա և գործող մանկավարժները ձեռք բերեն մանկավարժական դիագնոստիկ աշխատանքի իրականացման գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

1. վերլուծել մանկավարժական դիագնոստիկայի տեսական և մեթոդաբանական հիմքերը, համակարգել սկզբունքները, մակարդակները, գործառույթները,
2. բացահայտել մանկավարժական դիագնոստիկայի ժամանակակից ձեռքբերումներն ու զարգացման հնարավորությունները,
3. համակարգել և հանրակրթական դպրոցում կիրառել մանկավարժական դիագնոստիկայի բաղադրիչները մանկավարժական գործունեության տարբեր ուղղություններով,
4. մշակել և առաջադրել մանկավարժական գործընթացի դիագնոստիկայի արդյունավետ ուղիներ,
5. ստեղծել մանկավարժական դիագնոստիկայի բուհական դասընթացի ծրագիր և հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդիկաների փաթեթ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են դարձել

- ✓ հաղորդակցական (Ն.Ա. Բերեզովին, Ա.Ա. Կոգուտ),
- ✓ ճանաչողական-հաղորդակցական (Յու.Ս.Մատվիենկո,Ա.Լ.Վենգեր, Ս.Կ.Օվսյաննիկովա),
- ✓ հումանիստական-մարդաբանական (Ս.Ի. Գուրովա, Ա.Օ. Թոփուզյան),
- ✓ կոմպետենտային (Ն.Ն. Աբակումովա, Օ.Ի. Դորոֆեևա, Վ.Օ. Դիբինա, Ի.Ա. Սոլովցովա, Հ.Հ. Պետրոսյան),
- ✓ արժեբանական՝(Լ.Ի. Կոբիշևա) մոտեցումները և հայեցակարգերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Հետազոտությունը կատարելիս օգտագործել ենք.

- տեսական հետազոտության մեթոդներ՝ պատմագրական (հիմնախնդրին առնչվող փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն), մանկավարժական դիագնոստիկայի ոլորտում կուտակված համաշխարհային փորձի համեմատական-մանկավարժական, պատմա-համեմատական վերլուծություն,
- փորձարարական մեթոդներ՝ դիտում, զրույց, թեստ, գործունեության արդյունքների համեմատական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

-Հումանիստական-մարդաբանական, ճանաչողական-հաղորդակցական և կոմպետենտային մոտեցման տեսանկյունից վերլուծվել և ներկայացվել են մանկավարժական դիագնոստիկայի գործառույթները, սկզբունքները՝ հաշվի առնելով դիագնոստիկ հետազոտությունների իրականացման բովանդակությունը, մակարդակները, բաղադրիչները: Ճշգրտվել են մանկավարժական դիագնոստիկ կոմպենտենտության բովանդակային և գործառական բնութագրերը:

-ՀՀ բուհական համակարգում մանկավարժական առարկայախմբի ուսուցման գործընթացում մշակվել է «Մանկավարժական դիագնոստիկայի» գիտատեսական բուհական դասընթացի ծրագիր և դասախոսությունների փաթեթ՝ հաշվի առնելով ապագա մանկավարժների պատրաստման արդի պահանջները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Համակարգվել և վերլուծվել են ապագա ուսուցիչների մասնագիտական և դիագնոստիկ կոմպենտենտության հիմնական բաղադրիչները և հարաբերակցությունը, հաշվի առնելով մանկավարժության և նրա հարակից գիտությունների ոլորտներում տեղի ունեցող վերջին զարգացումները: Հստակեցվել են մանկավարժական դիագնոստիկայի իմաստային դաշտը ներկայացնող հիմնական հասկացությունները, որոշվել են դիագնոստիկ կոմպենտենտության ձևավորման և զարգացման տեխնոլոգիաները, ուղիները, միջոցները, բացահայտվել են մանկավարժական դիագնոստիկայի բովանդակային և գործառական բնութագրերը, համակարգվել են նրա սկզբունքները, մեթոդները, դիագնոստիկ հետազոտության կառուցվածքը, մակարդակները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

«Մանկավարժական դիագնոստիկա» բուհական դասընթացի ծրագիրը և մեր կողմից համակարգված դիագնոստիկ հոգեբանամանկավարժական մեթոդիկաների փաթեթը կարող են օգտակար լինել այդ հիմնախնդրով զբաղվող դասախոսների, ուսուցիչների, կրթության կազմակերպիչների, մանկավարժ գիտնականների, ասպիրանտների, հայցորդների, ուսանողների համար: Դրանք կարող են նաև լրացուցիչ նյութ և գրականության աղբյուր դառնալ «Տեսական և գործնական մանկավարժութուն», «Ընդհանուր մանկավարժություն» առարկաների դասավանդման համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ.

1. Մանկավարժական դիագնոստիկայի տեսական և մեթոդաբանական վերլուծությունը, դրա նպատակի, սկզբունքների, գործառույթների, կառուցվածքի հստակեցումը և համակարգումը նպաստում են մանկավարժական գիտության զարգացմանը:
2. Մանկավարժական գործընթացի որակը կախված է մանկավարժական դիագնոստիկայի մեթոդաբանական հիմքերի մշակվածության և ներդրման մակարդակից:

3. Մանկավարժական գործընթացի կատարելագործումը և դրա զարգացման միտումների կանխատեսումը, մանկավարժական գործընթացի մասնակիցների ակտիվ ներգործությունը մեծապես պայմանավորված է այդ գործընթացի վիճակի, արդյունքների մասին հավաստի տեղեկատվության ձեռքբերման մակարդակով:

4. Մասնագիտական կրթության և ուսումնական հաստատության գործունեության որակի էապես բարձրացմանը մեծապես կնպաստի «Մանկավարժական դիագնոստիկա» դասընթացի ներդնումը բուհում և ուսուցիչների վերապատրաստման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ. հետազոտությունը կատարվել է 2009-2013թթ. ժամանակահատվածում և ներառում է հետևյալ երեք փուլերը.

1. Պրոբլեմային-որոնողական փուլ (2009-2011թթ.): Այս փուլի հիմնական նպատակը անհրաժեշտ գիտական, հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, հետազոտության հիմնախնդրի, նրա հիմնական ուղղությունների որոշարկումը, հիմնական հասկացությունների համակարգի կառուցումը, նպատակի, խնդիրների, վարկածի ձևակերպումը, մեթոդների ընտրությունը:

2. Համակարգման փուլ (2012-2013թթ.): Այս փուլում մշակվել և տեսականորեն համակարգվել են մանկավարժական դիագնոստիկայի ուսումնասիրման և մանկավարժական գործընթացում նրա գործառնության հիմնական ուղղությունները, իրականացվել են հետազոտական-փորձարարական աշխատանքներ:

Հետազոտական-փորձարարական աշխատանքները կազմակերպվել են երկու փուլով՝ ստուգողական և փորձարարական: Հետազոտությանը մասնակցել են Երևանի թիվ 124, թիվ 177, Վայոց Ձորի մարզի Մարտիրոս գյուղի հիմնական դպրոցների թվով 53 ուսուցիչ, տարրական և միջին դպրոցի 223 աշակերտ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի 8 ուսանող (2012-2013 ուս. տարի, 1-ին կիսամյակ): Ստեղծվել է «Մանկավարժական դիագնոստիկա» բուհական դասընթացի ծրագիր և դիագնոստիկ հոգեբանամանկավարժական մեթոդիկաների փաթեթ:

3. Արդյունքների ընդհանրացման փուլ (2013թ.): Այս փուլում համակարգվել, ընդհանրացվել և գնահատվել են հետազոտության արդյունքները, ստուգվել են առաջադրված դրույթները:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ու Մանկավարժության տեսության և պատմության ամբիոններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալն է 153 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպվել է գիտական վարկածը, բացահայտվել են պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության գիտական նորույթը, մեկնաբանվել են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանական հիմքերը, որոշվել են ուսումնասիրության մեթոդները:

Ատենախոսության **առաջին՝** «**Մանկավարժական դիագնոստիկայի բնութագիրը, ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, մեթոդաբանական հիմքերը**» խորագրով **գլուխը** բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Մանկավարժական դիագնոստիկայի ձևավորման ու զարգացման պատմական հիմքերը**», ներկայացվել է մանկավարժական դիագնոստիկայի սկզբնավորումը որպես պրակտիկ մանկավարժական գործունեության տեսակ: Դիտարկվել են Ե.Ա.Միխայիլչովայի առանձնացրած մանկավարժական դիագնոստիկայի զարգացման չորս փուլերը՝

1. հիմնախնդրի առանձին կողմերի ավանդական-կիրառական մշակման փուլ, որը համընկնում է վաղ դասակարգային հասարակություններից մինչև վերածննդի դարաշրջանն ընկած ժամանակահատվածին,
2. մանկավարժական դիագնոստիկայի հիմնախնդիրների ուսումնասիրման նախափորձարարական փուլ, որն ընդգրկում է վերածննդի դարաշրջանից մինչև 19-րդ դարի 70-ական թվականները,
3. փորձարարական փուլ, որը համընկնում է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ արագորեն զարգանում են հոգեբանության, հոգեթերապիայի, սոցիոլոգիայի, մանկավարժության փորձարարական գիտաճյուղերը,
4. համակարգային-փորձարարական փուլ, որն ընդգրկում է 20-րդ դարի 30-ական թվականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը:

Առաջարկություն է արվում վերջին՝ համակարգային-փորձարարական փուլը տրոհել երկու փուլի և, որպես հինգերորդ փուլ, առանձնացնել XX դարի վերջին տասնամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը: Այս վերջին փուլի առանձնացումը հիմնավորվում է այն փաստով, որ այդ ժամանակահատվածում մանկավարժական դիագնոստիկային, նրա բովանդակությանը նոր պահանջներ են ներկայացվում: XXI դարում իրավիճակն ամբողջովին փոխվում է: Ժամանակակից մանկավարժությունն ընդունում է, որ դիագնոստիկան անհրաժեշտ է ոչ միայն ուսուցման և դաստիարակության, այլև միջանձնային հարաբերությունների կառուցման, մանկավարժական վերականգնողական, կրթության կառավարման գործընթացներում:

Նշվում է, որ առաջին փուլում ուսուցման, դաստիարակության և մասնագիտության ընտրության հարցերն անհնար էր իրականացնել առանց մանկավարժական դիագնոստիկայի: Վերջինիս արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր էր բացահայտել քաղաքացիների անձնային որակները, հետաքրքրությունները, հակումները: Այդպիսի փորձեր արվել են տարբեր երկրներում: Առաջին փուլում ներկայացվում են Հին աշխարհի երկրներում անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ կատարված փորձերը, որտեղ դիագնոստիկայի էին ենթարկվում ապագա քաղաքական գործիչներն ու քաղաքացիական ծառայողները: Գնահատվում էր նրանց անձնային որակների համարժեքությունը հասարակության մեջ դրականորեն ընդունելի գաղափարներին, արժեքներին, դիրքորոշումներին: Այդպիսի գործընթացներ են իրականացվել դեռևս Ք.ա. 3-րդ հազ. կեսերին Հին Բաբելոնում, որտեղ գրագիրներ պատրաստող դպրոցների շրջանավարտների քննություններ էին անցկացվում, ստուգվում և չափվում էր նրանց մասնագիտական պատրաստվածությունը: Հոգևոր առաջնորդների, սպասավորների ընտրության յուրահատուկ կարգ էր գործում հին Եգիպտոսում, որտեղ հաշվի էին առնում նաև ֆիզիկական որակները՝ գրավիչ, ազդեցիկ տեսքը, ձայնային տվյալները: Այդ երկրում կոնկրետ պահանջներ էին ներկայացվում նաև պետական ծառայողներին. նրանք ուսումնասիրում էին աշխարհիկ կյանքի համար Աստվածների տված «վեց ընծաները»՝ խոսքի արվեստ, գիր, աստղերի իմացություն, երաժշտության արվեստ և մարմնի մասին հոգ տանելու արվեստ: Պյութագորի դպրոցում ընդունելության ժամանակ կարևոր տեղ էր տրվում մտավոր կարողություններին, անձնային որակներին, ինչպիսիք են հնարամտությունը, չընկճվելու և նպատակին հասնելու պատրաստակամությունը: Դա մանկավարժական դիագնոստիկայի իրականացման բավականին հաջողված փորձ էր: Հետաքրքիր համակարգ էր գործում Հին Չինաստանում: Չին մեծ փիլիսոփա և մանկավարժ Կոնֆուցիոսը կողմ էր մանկավարժական գործընթացը սովորողի անձի դիագնոստիկայի տվյալների վրա կառուցելուն, թեև նա «դիագնոստիկա» եզրույթը որպես այդպիսին չի օգտագործել:

Մանկավարժական դիագնոստիկայի զարգացման երկրորդ փուլում փոխվեցին մոտեցումները: Յ.Ա.Կոմենսկին, Ջ.Լոկը, Ժ.Ռուսսոն, Ի.Պեստալլոցին փորձեցին զարգացնել այն գաղափարը, որ մանկավարժական գործունեությունն անհրաժեշտ է սկսել սովորողների անհատական առանձնահատկությունների, գիտելիքների, կարողություն-հմտությունների հաշվառումից, որն իսկապես նորարարություն էր: Մանկավարժական դիագնոստիկայի զարգացումը շարունակվեց նաև 19-րդ դարի 2-րդ կեսին: Կ.Ուշինսկին, Ն. Շելգունովը, Ի.Սեչենևը, Ն.Պիրոգովը գտնում էին, որ մանկավարժական ներգործության արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակվողների ֆիզիկական և հոգեբանա-

կան անհատական առանձնահատկությունների իմացությամբ և մանկավարժական աշխատանքում դրանց հաշվառմամբ:

Երրորդ փուլն առանձնանում է փորձարարական աշխատանքների արդյունքների ներդրմամբ: Պ.Ս.Լեսգաֆտը, Ա.Ֆ.Լազուրսկին, Վ.Պ.Կաշչենկոն արդեն XIX դարավերջին և XX դարի սկզբում զարգացրին այն մոտեցումները, որ մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դիագնոստիկ մեթոդների արդյունավետ կիրառմամբ: Ֆ.Հալտոնը մշակեց առաջին թեստերը, որոնց կիրառումը բավականին լուրջ ներդրում էր մանկավարժական դիագնոստիկայի զարգացման պատմության մեջ: Մանկավարժական դիագնոստիկայի զարգացման վերաբերյալ Ս.Տ.Շացկու մոտեցումները ևս լուրջ ավանդ էին մանկավարժական գիտության ոլորտում: Նա ևս կիսում էր Ա.Ս. Մակարենկոյի այն կարծիքը, որ երեխայի անձի համակարգված դիագնոստիկայի տվյալների հիման վրա է հնարավոր դաստիարակության համակարգի համալիր զարգացումը:

Չորրորդ փուլում արդեն սկսեց շրջանառվել «մանկավարժական դիագնոստիկա» հասկացությունը (Կ.Ինգենկամպ,1968թ.), եվրոպական երկրներում լայն տարածում գտան այն թեստերը, որոնցով գնահատվում էր կրթության որակը, սովորողների առաջադիմությունը, մտավոր կարողությունները, դպրոցական ուսուցմանը նախադպրոցականների պատրաստվածության մակարդակը: Այսօր էլ աշխարհի զարգացած երկրներում լայնորեն կիրառվում են դիագնոստիկ թեստեր, որոնց արդյունքների հիման վրա կադրերի ընտրություն է կատարվում: Մանկավարժական դիագնոստիկայի զարգացման՝ մեր կողմից առանձնացված հինգերորդ փուլում՝ 21-րդ դարում իրավիճակն ամբողջովին փոխվում է: Ժամանակակից դպրոցում, ընդհանրապես կրթության համակարգում անխուսափելի անհրաժեշտություն են դառնում դիագնոստիկ մեթոդների կիրառումը, մանկավարժական դիագնոստիկայի կայուն համակարգի ձևավորումը: Ե՛վ տեսական, և՛ գործնական մակարդակներում գնալով կարևորվում է մանկավարժական դիագնոստիկայի դերը, լույս են տեսնում մանկավարժական դիագնոստիկային վերաբերող բազմաթիվ տեսական և փորձարարական աշխատանքներ, մշակվում են մանկավարժական դիագնոստիկայի մեթոդաբանությանը, էությանը, կիրառման ոլորտներին և առանձնահատկություններին վերաբերող դրույթներ, երաշխավորություններ: Ս.Սլաստյոնինը, Ի.Պ.Պոդլասին իրենց աշխատություններում անդրադառնում են կրթության և դաստիարկության դիագնոստիկայի հիմնախնդիրներին, ներկայացնում են մանկավարժական դիագնոստիկան որպես մանկավարժական գիտության նոր ուղղություն: Այսինքն, մանկավարժական դիագնոստիկան դնում է լուրջ և խորքային հետազոտություններ, վերլուծություններ անելու, բովանդակության, մեթոդների, կիրառման բնագավառների ու պայմանների բացահայտման և մանկավարժական գործընթացում դրանց արդյունավետ ներդրման պահանջ:

«Մանկավարժական դիագնոստիկայի ժամանակակից բնութագիրը և գործառույթները» խորագրով **երկրորդ ենթագլխում** տրվում է մանկավարժական դիագնոստիկայի բնութագիրը: Մանկավարժական դիագնոստիկան հունարեն «դիա»-թափանցիկ և «գնոզիս»-գիտելիք բառերից է առաջացել: Հետագա շարադրանքում «դիագոստիկա» եզրույթի բազմաթիվ սահմանումներ են տրվում՝ «Դիագնոստիկան չափման օբյեկտի վիճակի որոշումն է /քանակական կամ որակական/ չափման պահին» /Զախարով Ս.Մ/: «Դիագնոստիկան իմացության հատուկ տեսակ է, որը գտնվում է էության, գիտական իմացության և միասնական երևույթի ճանաչման միջև: Այդպիսի ճանաչողության արդյունքը դիագնոզն է...» /Նիկիտինա Ն.Ի./ և այլն: Այս ենթագլխում ներկայացվում են մանկավարժական դիագնոստիկայի բովադակության մաս կազմող մանկավարժական դիագնոզը և նրա բաղադրիչները: Հանգամանորեն վերլուծվում են մանկավարժական դիագնոստիկայի գործառույթները՝ հետադարձ կապի ապահովման, հավաքագրման, կանխատեսողական, գնահատողական, կառավարչական, դաստիարակչական, հաղորդակցական:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**, որը վերնագրված է՝**«Մանկավարժական դիագնոստիկայի կիրառման առանձնահատկությունները հանրակրթության ոլորտում»**, ներառում է երեք ենթագլուխ: **Առաջին ենթագլխում** հանգամանորեն վերլուծվում է դպրոցական ուսուցմանը նախադպրոցականների պատրաստվածության դիագնոստիկայի հիմնախնդիրը:

Այն մանկավարժության ոլորտ է, որը հրատապ ուսումնասիրություն է պահանջում: Դպրոցական ուսուցմանը նախադպրոցականի պատրաստվածությունը որոշող բազմաթիվ թեստերի միջոցով (Գինզբուրգի, Լուրիայի մեթոդիկաներ, Կերն-Իրասեկի թեստ, Վենգերի Լաբիրինթոս մեթոդիկա) կարելի է բացահայտել երեխայի անհատական առանձնահատկությունները, ինտելեկտուալ ոլորտի յուրահատկությունը: Արդյունավետ դպրոցական ուսուցում կազմակերպելու գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել այն բոլոր տվյալները, որոնք ձեռք են բերվում վերոնշյալ մեթոդիկաների կիրառման արդյունքում:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է «**Հանրակրթական դպրոցում մանկավարժական վերահսկողության իրականացման գործառույթները**», ներկայացված են վերահսկողության գործառույթները՝ դիագնոստիկ, ուսուցանող, կազմակերպող, կանխատեսող, դաստիարակող: Դիագնոստիկ գործառույթն անմիջականորեն կապված է վերահսկողության նպատակի հետ, ինչը ենթադրում է մանկավարժական երևույթի ուսումնասիրում, որակի բացահայտում, գործընթացի և մանկավարժական կադրերի գնահատում, ստացված տվյալների վերահսկողության հիման վրա կառավարչական որոշման կայացում:

Ուսուցանող գործառույթը պայմանավորված է մանկավարժական գործընթացի նպատակով, խնդիրներով, իրականացման միջոցների ու մեթոդների անընդհատ զարգացմամբ: Մանկավարժական վերահսկողությունը դիտարկում ենք որպես ուսուցման գործընթացի

կողմերի միջև անընդհատ դրսևորվող կապի միջոց, իսկ ուսուցման գործընթացի սուբ-յեկտների համար՝ հետադարձ կապի միջոց:

Դպրոցում մանկավարժական վերահսկողության կազմակերպող գործառույթը դրսևոր-վում է մանկավարժական գործընթացի ողջ ընթացքում: Վերահսկողության արդյունքը թելադրում է ետ մնացող աշակերտների, իրենց աշխատանքում թերացող մանկավարժների համար լրացուցիչ ուսումնական պարապմունքների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում և հաջողություններ գրանցած մասնակիցների ձեռքբերումները գնահատելու, խրախուսելու անհրաժեշտություն:

Մանկավարժական վերահսկողությունն ունի նաև կանխատեսող գործառույթ, ինչը հնա-րավորություն է տալիս գնահատել մանկավարժական գործընթացի զարգացման ընթացքն ու հնարավոր հետևանքները:

Օբյեկտիվ իրականացվող մանկավարժական վերահսկողությունը ձևավորում է նաև սո-վորողների համապատասխան անձնային որակներ (պատասխանատվության, սեփական աշխատանքի նկատմամբ հարգանքի, ուրիշի կարծիքը լսելու և հարգելու որակներ), ար-ժեքներ, ինչը փաստում է, որ մանկավարժական վերահսկողությունն ունի դաստիարակող գործառույթ:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է՝ «**Ուսումնական գործընթացի արդյունավետության հիմնական ցուցանիշների դիագնոստիկան հանրակրթական դպրոցում**»:

Ուսուցման գործընթացի դիագնոստիկան ենթադրում է այդ գործընթացի, դրա բովան-դակության, բաղադրիչների, արդյունավետության ուսումնասիրում, հնարավոր զարգացում-ների կանխատեսում, մշտադիտարկում:

Հանրակրթական դպրոցի երեք հիմնական՝ կրթական, զարգացնող ու դաս-տիարակչական գործառույթների գնահատումը հնարավոր է իրականացնել միայն կոնկրետ չափանիշների ու չափորոշիչների միջոցով: Իսկ չափանիշը կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակն է: Պրակտիկայում ընդունված է սովորողների կողմից ծրագրային նյութի յուրացման մակարդակն անվանել առաջադիմություն:

Մանկավարժի մասնագիտական գործունեության որակի գնահատման համար առանձ-նացվում են որոշակի չափանիշներ, որոնցից են՝ ուսուցչի կողմից իր աշխատանքի արդ-յունավետության գնահատման տեխնոլոգիաներին, մեթոդներին տիրապետումն ու կիրառումը, ուսուցման մեթոդների ստեղծագործական կիրառման կարողությունները, իր մասնագիտության ոլորտում գիտության նորագույն ձեռքբերումներին ծանոթ լինելը, նորա-րարական մանկավարժության նվաճումները պրակտիկ գործունեության մեջ կիրառելու կարողությունները:

Ատենախոսության **երրորդ գլուխը** կրում է «**Մանկավարժական երևույթների դիագնոստիկ հետազոտության բովանդակությունը և նրա բաղադրիչների փորձարարական ուսումնասիրությունը**» խորագիրը: **Առաջին ենթագլխում** ներկայացվում է մանկավարժական դիագնոստիկ հետազոտության կառուցվածքը, հիմնական սկզբունքներն ու մակարդակները: Հանգամանորեն քննարկվում է դիագնոստիկ հետազոտության երեք հիմնական կողմերը՝ սեմիոտիկ, տեխնիկական, տրամաբանական: Սեմիոտիկ կողմը ենթադրում է, որ հետազոտություն իրականացնող մանկավարժը պետք է հստակ ձևակերպի հետազոտության նպատակը, խնդիրները, հստակեցնի հասկացությունները, բովանդակությունը, փուլերը, արդյունավետության, հավաստիության ստուգման մեթոդները: Դիագնոստիկ հետազոտության տեխնիկական կողմը ենթադրում է հստակեցված նպատակի, խնդիրների, վերջնարդյունքների ձեռքբերման համար նպատակահարմար մեթոդների ընտրություն: Դիագնոստիկ հետազոտության վերջին՝ տրամաբանական կողմը փաստում է, որ արդյունավետությունն անհնար է, եթե ուսուցիչը չունի դիագնոստիկայի օբյեկտի մասին կոնկրետ եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Այս ենթագլխում ներկայացված են նաև մանկավարժական դիագնոստիկայի իրականացման սկզբունքները՝: Մանկավարժական դիագնոստիկան իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնց առանձնահատկությունները պայմանավորված են հանրակրթական դպրոցում մանկավարժական գործընթացի օրինաչափություններով, առանձնահատկություններով: Այդ սկզբունքներն են՝ մանկավարժական խնդրի բազմակողմանի հետազոտման, դիագնոստիկ մեթոդների, տեխնոլոգիաների, մեթոդիկաների կիրառման, մանկավարժական դիագնոստիկայի իրականացման գործընթացում անհատական առանձնահատկությունների հաշվառման, մեթոդների կիրառման եղանակներն ու վայրը սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ ընտրելու, մանկավարժական դիագնոստիկայի իրականացման օբյեկտիվության, սովորողների դիագնոստիկայի և դաստիարակության միասնության, մանկավարժական գործընթացը, նրանում դրսևորվող երևույթները իրենց դինամիկայում ուսումնասիրելու, սովորողի անձի և դասարանական կոլեկտիվի համատեղ հետազոտման, հետազոտվող երևույթին ու անձին չվնասելու, գաղտնիության սկզբունքները: Մանկավարժական դիագնոստիկայի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նրա հիմնական մակարդակների առանձնացումն ու գործնականում կիրառումը: Առանձնացվում են երեք մակարդակներ՝ բաղադրամասային, կառուցվածքային, համակարգային:

Մանկավարժական դիագնոստիկայի սուբյեկտը առաջին՝ բաղադրամասային մակարդակում ուսումնասիրում է մանկավարժական գործընթացի առանձին բաղադրիչները, դրանց գործառնության մակարդակները: Դիագնոստիկայի երկրորդ՝ կառուցվածքային մակարդակը ենթադրում է բաղադրամասային մակարդակում ձեռք բերված հետազոտութ-

յան արդյունքների վերլուծություն, համեմատում, սխալների, բացթողումների բացահայտում, դրական կողմերի գրանցում: Այնուհետև յուրաքանչյուր բաղադրամասի համար առանձին կազմվում է դիագնոստիկ եզրակացություն: Մանկավարժական դիագնոստիկայի երրորդ՝ համակարգային մակարդակում առաջին երկու մակարդակներում ստացված արդյունքների հիման վրա կատարվում է որակական վերլուծություն, հաստատվում կամ ժխտվում են առաջին մակարդակում կատարված կանխատեսումները, համադրվում են բոլոր արդյունքները և տրվում է վերջնական եզրակացություն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է՝ «**Մանկավարժական դիագնոստիկայի կիրառման հնարավորությունները ուսուցչի կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում**» ենթագլխում խոսվում է այն մասին, որ մասնագիտության ընտրությունը կատարում է աշակերտը, բայց ընտրության իրականացումը ենթադրում է մանկավարժական, սոցիալական, հոգեբանական, անձնային գործոնների հաշվառում: Անձնային գործոնների շարքում կարևորվում են անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածքի, բնավորության գծերը, իմացական որակները, ընդունակությունները, հետաքրքրությունները, պահանջմունքները: Այնուհետև, կարևորվում է կոնկրետ մասնագիտության համար նպատակահարմար անձնային որակների բացահայտումը: Անհրաժեշտ է առանձնացնել կոնկրետ չափանիշներ, ցուցանիշներ, որոնք կընդգրկվեն ուսումնասիրության գործընթացում: Այդպիսիք կարող են լինել մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի առանձնահատկությունները, ընդունակությունները, անձի ուղղվածությունը՝ հետաքրքրությունները, պահանջմունքները, դիրքորոշումները, դրդապատճառները: Նշված որակների հիման վրա գնահատվում է դպրոցականին առաջարկվող մասնագիտության համապատասխանությունը նրա անհատական հոգեբանական առանձնահատկություններին:

«**Դպրոցականների դաստիարակվածության և սոցիալական զարգացման դիագնոստիկան մանկավարժական գործընթացում**» խորագիրը կրող **երրորդ ենթագլխում**, կարևորելով սովորողի անձի սոցիալական զարգացման հիմնախնդիրը, շեշտադրվում է նրա լուծման համար նպատակահարմար մեթոդների, միջոցների ընտրությունը: Սոցիալական զարգացումը ենթադրում է աշակերտի այնպիսի որակների զարգացում, ինչպիսիք են հաղորդակցման կարողությունները, կայուն հասարակական դիրքորոշումները, ակտիվ սոցիալական դիրքորոշումը, սոցիալական միջավայրում հարմարվելու որակները, վերաբերմունքը երևույթների, շրջապատի նկատմամբ:

Մանկավարժական դիագնոստիկայի կիրառումն անհրաժեշտ է նաև դաստիարկության գործընթացի արդյունավետության նպատակով:

Դաստիարկության գործընթացում դիագնոստիկան ենթադրում է նախ և առաջ աշխատանքների պլանավորում: Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը հանրա-

կրթական դպրոցում իրականացվում է ողջ դպրոցի, առանձին դասարանների և առանձին աշակերտների համար: Մեր հետազոտությունների ընթացքում ուսումնասիրված դաստիարակչական աշխատանքների պլանները չէին բավարարում պահանջվող բոլոր չափանիշներին: Խորհրդային տարիներին ևս դիագնոստիկ աշխատանքներ չէին իրականացվում, դասղեկները դաստիարակչական աշխատանքները կառուցում էին ավանդական ծրագրերի հիման վրա, որոնք ընդգրկում էին հետևյալ հիմնական բաղադրիչները՝դասարանի համառոտ բնութագիրը, դաստիարակչական խնդիրները, դասարանի հետ աշխատող ուսուցիչների դաստիարակչական գործունեության կարգավորումը, աշխատանքը ծնողների հետ:

Դասարանում դաստիարակության գործընթացի դիագնոստիկայի ծրագիրը ենթադրում է նաև դասարանական կոլեկտիվի մասին հավելյալ տեղեկատվության ձեռքբերում: Այդ տվյալներով լրացվում են աշակերտների անհատական դիագնոստիկ քարտերը:

Դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, որակը մեծապես պայմանավորված է ոչ միայն դաստիարակչական աշխատանքի պլանավորումով, դիագնոստիկ ծրագրի որակով, այլև մանկավարժի կոմպետենտությամբ, վարպետությամբ, փորձառությամբ: Սակայն, ցանկացած պարագայում, դաստիարակության գործընթացի արդյունավետության համար պարտադիր է մանկավարժական դիագնոստիկայի կիրառումը:

Հետազոտությունների ստուգողական և փորձարարական փուլերում ստացված տվյալները ցույց տվեցին, որ հետազոտված ուսուցիչները սեմինար պարապմունքներից հետո կարևորեցին մանկավարժական դիագնոստիկան, գիտելիքներ ձեռք բերեցին մանկավարժական դիագնոստիկայի, նրա իրականացման մեթոդների, մակարդակների մասին, ծանոթացան մի շարք դիագնոստիկ մեթոդիկաների, որոնցից մի քանիսով հետազոտեցին հանրակրթական դպրոցի թվով 223 աշակերտների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, նրանց դաստիարակվածության, սոցիալական զարգացման մակարդակները: Հետազոտությունների ստուգողական և փորձարարական փուլերի արդյունքների գնահատման և համեմատման նպատակով առանձնացրել ենք վեց չափանիշներ.

1. Հստակ, ամբողջական և բազմակողմանի գիտելիքներ մանկավարժական դիագնոստիկայի էության վերաբերյալ:

2. Մանկավարժական դիագնոստիկայի մեթոդների մասին գիտելիքների առկայություն, դրանց լիարժեքություն:

3. Մանկավարժական դիագնոստիկայի իրականացման սկզբունքների մասին գիտելիքների առկայություն, դրանց լիարժեքություն:

4. Մանկավարժական դիագնոստիկ հետազոտության կառուցվածքի մասին գիտելիքների առկայություն, դրանց լիարժեքություն:

5. Մանկավարժական վերահսկողության մասին ամբողջական գիտելիքներ:

6. Դպրոցականի անձի սոցիալական զարգացման, դաստիարակվածության մակարդակի, անհատական առանձնահատկությունների բացահայտման համար մեթոդիկաների իմացություն, դրանց կիրառման ձևերի և մշակման տարբերակների մասին պատկերացում [գծապատկեր 1]:



Գծապատկեր 1. Ուսուցիչների հետազոտության փուլերի համեմատական տվյալներ

Գծապատկերում ակնառու է, որ սեմինար-գործնական պարապմունքներից հետո զարգացում գրանցվեց ուսուցիչների մոտ: Բաց գույնով ներկայացված է մեր կազմած հարցաթերթով իրականացրած հետազոտության տվյալները ստուգողական փուլում: Փորձարարական փուլում գրանցված արդյունքները ներկայացված են մուգ գույնով:

Մեր կողմից կազմված «Մանկավարժական դիագնոստիկա» բուհական դասընթացի ծրագրով իրականացված սեմինար պարապմունքների արդյունքում 53 ուսուցիչներն էլ կարևորել են մանկավարժական դիագնոստիկայի դերը մանկավարժի աշխատանքում: Ուսուցիչների հետ աշխատանքի վերջին փուլում յուրաքանչյուր դպրոցում կազմակերպվում էին հարցումներ՝ պարզելու համար, թե ինչ չափանիշներով, մեթոդներով են ուսումնասիրում իրենց աշակերտների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, և որ շատ կարևոր է, թե ինչ առանձնահատկություններ են կարողանում բացահայտել: Ստուգողական փուլում նշվում էին սովորողների անհատական հոգեբանական 4 առանձնահատկություններ՝ արագ ընկալումը, պարտաճանաչ լինելը, լավ հիշողությունը, կարգապահ վարքը, իսկ փորձարարական փուլում դրանք 20-ն էին՝ հիշողության ու երևակայության տեսակների մակարդակը, մտածողության որակները, ուսման դինամիկան, ուշադրության ծավալը, տեսողական կարճատև հիշողությունը, ընդհանրացման ու դասակարգման գործընթացները, ակնառու-պատկերավոր մտածողության մակարդակը, կերպարային պատկերացումները, պատճառահետևանքային կապերի ընկալումը, լիդերին բնորոշ հատկությունները, դպրոցական տագնապայնությունը, հոգեսոցիալական հասունության ցուցանիշները, դասարանի հետ հարաբերությունները, խառնվածքի, բնավորության բազմաթիվ հատկանիշներ, դիրքորոշումները, հաղորդակցման կարողությունները,

բարոյական արժեքները, ուսման մոտիվացիան և ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունների գնահատումը:

Հետազոտության վերջին փուլում յուրաքանչյուր դպրոցում կազմակերպվեցին աշակերտների անհատական հոգեբանական առանձնահատկությունների դիագնոստիկ կոնկրետ հետազոտություններ (223 աշակերտ), որոնց մասնակցեցին նաև ուսուցիչները: Ուսուցիչներին տրամադրվեցին սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդիկաներ (շուրջ հինգ տասնյակ), որով հնարավոր էր ուսումնասիրել, չափել սովորողների տասնյակ առանձնահատկություններ, ստանալ քանակական և որակական տվյալներ, գնահատել արդյունքները և հետագա աշխատանքները կառուցել այդ տվյալների հիման վրա:

Այլ էր պատկերը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի 8 ուսանողների հետ անցկացված «Մանկավարժական դիագնոստիկա» դասընթացի ավարտին կատարված հետազոտությունների արդյունքում: Հարցման ենթարկված 8 ուսանողներն էլ լիարժեք պատկերացնում էին մանկավարժական դիագնոստիկայի էությունը, տարբերում էին մանկավարժական դիագնոստիկան վերահսկողությունից, առանձնացնում էին դիագնոստիկայի կառուցվածքային բաղադրիչները, մեթոդները: Ավելին, նրանք ծանոթ էին դիագնոստիկ գրեթե բոլոր մեթոդիկաներին, որոնք դասընթացի ժամանակ տրամադրվել էին իրենց:

Այսպիսով, մեր կողմից կատարված տեսական և փորձարարական աշխատանքների վերլուծության արդյունքները թույլ են տալիս **եզրակացնել**, որ

1. Ճանաչողական-հաղորդակցական և կոմպետենտային տեսությունների տեսանկյունից մանկավարժական դիագնոստիկայի տեսական և մեթոդաբանական հիմքերի վերլուծությունը, մանկավարժական դիագնոստիկայի սկզբունքների, մակարդակների, գործառույթների հստակեցումն ու համակարգումը նպաստում է մանկավարժության տեսության ու պրակտիկայի հարստացմանը և դրանց մշակվածության ու ներդրման մակարդակից է կախված մանկավարժական գործընթացի որակն ու հետագա զարգացումը:

2. Մշակված «Մանկավարժական դիագնոստիկա» գիտատեսական դասընթացի ծրագիրը և հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդիկաների փաթեթը կարող են արդյունավետորեն կիրառվել ոչ միայն ուսուցիչների պատրաստման, այլև վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացներում: «Մանկավարժական դիագնոստիկա» գիտատեսական դասընթացի բովանդակության շարունակական արդիականացումը պետք է պայմանավորված լինի ինչպես հոգեբանամանկավարժական հետազոտությունների զարգացմամբ, այնպես էլ հանրակրթական դպրոցի արդի պահանջներով:

3. Մանկավարժական դիագնոստիկ տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է ձևավորել ապագա ուսուցիչների մասնագիտական գործունեություն ծավալելու համապատասխան կարողություններ, հաշվի առնելով դիագնոստիկ կոմպետենտության կառուցվածքը, բովանդակային-գործառական բնութագրերը, սովորողների ճանաչողական պահանջմունքները և դրդապատճառները, ինչպես նաև տվյալ դասընթացի բովանդակությունը:

4. Դիագնոստիկայի կառուցվածքային մակարդակը, որն ընդգրկում է բաղադրամասային մակարդակում ձեռք բերված հետազոտության արդյունքների վերլուծություն, համեմատում, սխալների, բացթողումների բացահայտում, դրական կողմերի գրանցում, հնարավորություն է տալիս վեր հանել մանկավարժական գործընթացի բաղադրամասերի միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը, օրինաչափությունները:

5. Մանկավարժական դիագնոստիկայի համակարգային մակարդակում ձևավորված եզրակացությունն ընդգրկում է ինչպես նկարագրական, այնպես էլ փորձագիտական տեղեկատվություն մանկավարժական գործընթացի որակի, նրա առանձին բաղադրիչների գործառնելիության, մանկավարժական գործընթացի հնարավոր զարգացումների, մանկավարժների կողմից ընտրված գործիքակազմի նպատակահարմարության մասին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Եգանյան Գ., Մանկավարժական դիագնոստիկայի ձևավորման պատմական հիմքերն ու զարգացման փուլերը, «Մանկավարժական միտք» ամսագիր, N 1-2, 2014 թ., էջ 101-109:

2.Եգանյան Գ., Հանրակրթական դպրոցում մանկավարժական վերահսկողության իրականացման առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N 4-6, 2013թ., էջ 28-31:

3.Եգանյան Գ., Մանկաբանության ծագումն ու զարգացումը մանկավարժական դիագնոստիկայի տիրույթում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N 10-12, 2013թ., էջ 34-39:

4.Եգանյան Գ., Մանկավարժական դիագնոստիկայի էությունը և գործառույթները, «Մանկավարժական միտք» ամսագիր, N 3-4, 2012թ., էջ 186-191:

5. Եգանյան Գ., Ինտեգրման գործընթացի հոգեբանամանկավարժական վերլուծությունը տարրական դպրոցում, «Հոգեբանությունը և կյանքը» ամսագիր, N 1-2, 2011թ., էջ 41-44:

ЕГАНЯН ГАЯНЕ ГАГИКОВНА

ТЕОРЕТИЧЕСКИЙ И МЕТОДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ДИАГНОСТИКИ В ПЕДАГОГИКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 18-го июня 2015 г. в 12:^{00} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ. В современных условиях становление единого образовательного пространства обусловлено совершенствованием системы образования, тенденциями развития педагогических наук. Основное направление современного образования обусловлено с одной стороны заботой о качестве образования, с другой стороны, саморазвитием учителя, педагога, выявлением его личностного потенциала с помощью профессионального развития.

Управление качеством образовательного процесса, обеспечение прогрессивного развития обучающегося по профессиональной программе возможно при наличии обратной связи. В педагогическом процессе такую связь обеспечивает педагогическая диагностика.

Важным условием успешной подготовки конкурентноспособного педагога-специалиста в рынке труда и показателем качества образования является получение и обработка объективных данных о профессиональных, личностных качеств учащихся.

Анализируя современную систему образования можно сделать вывод, что мы все еще пренебрегаем педагогической диагностикой. Отсутствие знаний о диагностике, или их недостаточность, отсутствие соответствующих компетенций на сегодняшний день считается серьезным недостатком. Для устранения вышеназванных недостатков необходимо всестороннее и системное исследование педагогической диагностики, введение предмета «Педагогическая диагностика», как самостоятельного курса в рамках общей педагогики, разработка соответствующей учебной программы, проверка ее эффективности на практике. Все это будет способствовать повышению качества образования, эффективному планированию работы и обеспечению обратной связи.

ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ - теоретико-методологический анализ основ педагогической диагностики и разработка путей повышения ее эффективности при применении в педагогическом процессе.

ЗАДАЧИ ИССЛЕДОВАНИЯ:

1. Проанализировать теоретические и методологические основы педагогической диагностики, систематизировать ее принципы, уровни и функции,
2. выявить современные достижения педагогической диагностики и возможности ее дальнейшего развития,
3. систематизировать и применить компоненты педагогической диагностики в среднеобразовательной школе и в различных областях педагогической деятельности,
4. разработать и выдвинуть эффективные пути диагностики учебного процесса,
5. создать вузовскую учебную программу по педагогической диагностике и пакет диагностических психолого-педагогических методик.

НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ:

С точки зрения гуманистически - антропологического, когнитивно-коммуникативного подходов проанализированы и представлены функции, принципы педагогической диагностики, с учетом содержания, уровня, компонентов осуществления диагностических исследований. Уточнены содержательные и функциональные характеристики педагогической диагностической компетенции. Разработана целостная и систематизированная вузовская учебная программа и пакет лекций по педагогической диагностике в вузовской системе РА в процессе обучения предметов педагогического цикла, с учетом современных требований подготовки педагогов.

ТЕОРЕТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.

Систематизированы и проанализированы основные компоненты и соотношение профессиональной и диагностической компетенции, с учетом последних развитий изменений в области педагогики и ее сопредельных наук.

Уточнены основные понятия, представляющие семантическое поле педагогической диагностки, определены технологии, пути, средства формирования и развития диагностической компетенции, раскрыты ее содержательные и функцииоанльные характеристики, систематизированы ее принципы, методы, структура, уровни диагностического исследования.

ПРАКТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ: разработанные нами универсальная вузовская программа «Педагогическая диагностика» и пакет психолого-педагогических методик могут быть полезными для учителей, преподавателей, занимающихся данной проблематикой, организаторов образования, ученых, аспирантов, соискателей и студентов. Они также могут послужить дополнительным материалом и источником литературы для преподавания предметов “Теоритическая и практическая педагогика”, “Общая педагогика”.

СТРУКТУРА И ОБЪЕМ ДИССЕРТАЦИИ. Диссертационная работа изложена на 153 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

EGANYAN GAYANE GAGIK

THEORETICAL AND METHODOLOGICAL ANALYSIS OF DIAGNOSTICS IN PEDAGOGY

Thesis for claiming a candidates degree in pedagogical sciences, specialty ‘’13.00.01 Pedagogical Theory and History’’

The defense of thesis will be held on June 18th, 2015, at 12:00 p.m., at the meeting of the Specialized Pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, 17 Tigran Mets street.

SUMMARY

THE RELEVANCE OF THE RESEARCH. In modern conditions the formation of common educational space due to the improvement of the education system, the tendencies of developing pedagogical sciences. The main orientation of contemporary education is on one hand due to solicitude towards education level and on the other hand towards professional assistance aimed at the development and exposure of professional capacity, as well as self-fulfillment of the teacher or pedagogue.

The quality management of the educational process, to ensure the progressive development of students on professional learning program is possible with appropriate feedback. Pedagogical diagnostics provides such a feedback in the pedagogical process.

An important condition for the successful preparation of a competitive teacher-specialist in the labor market and the quality of education is to get and process objective data about the professional, personal qualities of students.

One of the indicators of education quality in contemporary job market is the competitiveness level of a pedagogue-specialist. Though, in our opinion, the main issue is not only the education result but also the achievement paths, means, mechanisms of these results and the training process of a specialist. By analyzing characteristic skills of a specialist, it becomes possible to set aside the whole scope of vocational issues, which solution paths concerning knowledge should possess each future pedagogue.

From the analysis of contemporary eduaction system, we can conclude that pedagogical diagnostics is still being ignored among us; the absence or inadequancy of knowledge about it, as well as inadequancy of appropriate competences for practicing diagnostical concepts is a serious omission. Supplementation of the above mentioned omissions will give us the opportunity to supervise future pedagogue’s fulfillment procedure and progress. It also assumes a complex and comprehensive analysis of pedagogical diagnostics, “Pedagogical diagnostics” as an inclusion of individual training in educational courses of pedagogical specialties, development of appropriate course program and it’s effectiveness testing. This will promote the increase of educational quality level, future actions on correct planning and provision of retrospective connection.

THE AIM OF THE RESEARCH. It's increasing the efficiency of application of elaboration and nomination of paths in pedagogical diagnostics' theoretical analysis and methodological process.

THE OBJECTIVES OF THE RESEARCH:

1. analyze the theoretical and methodological basis of pedagogical diagnostics, coordinate principles, levels, operations,
2. reveal contemporary achievements and development opportunities of pedagogical diagnostics,
3. coordinate the components of pedagogical diagnostics in different pedagogical activities and means and use them in secondary school,
4. develop and propose effective ways for diagnostics of pedagogical process,
5. create the postgraduate program of pedagogical diagnostics and package of diagnostic psycho-pedagogical methodologies.

SCIENTIFIC NOVELTY OF RESEARCH:

It analyzes and presents from the standpoint of humanistic - anthropological, cognitive-communicative approaches the functions, principles of pedagogical diagnostics, based on the content level, the components of the diagnostic tests. It reveals the meaningful and functional characteristics of pedagogical diagnostic competence.

It develops a comprehensive and systematic university training program on pedagogical diagnosis in higher education system in RA in the process of teaching pedagogical subjects and the package of lectures, to meet modern standards of teacher training.

THEORETICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH:

It systematizes and analyzes the main components and the ratio of professional and diagnostic competences, taking into account the recent developments in the field of pedagogy and its neighboring sciences.

It clarifies the basic concepts that represent the semantic field of teaching diagnostic, defines the technologies, ways and means of forming and developing diagnostic competence, discloses its content and functional characteristics, the principles, methods, structure, levels of diagnostic study.

THE PRACTICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH.

The developed universal university program "Educational Diagnosis" and the package of psychological and pedagogical methods can be useful for teachers, professors, organizers of education, scholars, postgraduate students, applicants and students. They can also serve as an additional source material and literature to teach subjects "Theoretical and practical pedagogy", "General Pedagogy".

THE STRUCTURE OF THE RESEARCH. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, list of references and annexes. The total volume of the theses is 153 computer sheets.